# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք,

13.փետրվարի. 2019թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Սարահարթ համայնքի ղեկավարի թիվ 8, 9, 10 որոշումները:

Առդիր 3 էջ:

Սարահարթ համայնքի ղեկավար Ա. Փիլոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետությանԼոռումարզիՍարահարթհամայնք,
11 .փետրվար.2019թ.

## ՈՐՈՇՈՒՄ 8

## ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների 10.06.2008թ. 27.04.2010թ ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության 1004 որոշումով և հիմք ընդունելով Գ. Վեքիլյանի ԱՁ-ի կողմից կազմված հատակագիծը, հողի բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնախողովի կողմից ընդունված 22.03.1993թ թիվ 1 որոշումը և հարգելով Սիրվարդ Խաչատրյանի դիմում խնդիանքը այն մասին,որՍարահարթ համայնքում 0018-0002 ծածկագրի տակ գտնվող 0.13807 սեփականության իրավունքով իրենց պատկանող տնամերձ հողամասի վրա Սիրվարդ Սերյոժայի Խաչատրյանի և ընտանիքի մյուս անդամների կողմից 1994թ կառուցվել է 209.51քմ մակերեսով բնակելի տուն,անասնագոմ 56.59քմ. սակայն կառուցման վերաբերյալ փաստաթղթերը չեն պահպանվում: Ուստի նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, և օրենքով պահանջող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, և քանի որ դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտում, կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չեն գտնվում հողային օրենսգրքով նախատեսված 60-րդ հոդվածի ցանկում, ուստի ելնելով վերոգրյալից

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Օրենքի ուժով ճանաճել Սիրվարդ Սերյոժայի Խաչատրյանի /ծնված 20.08 1968թ/Նվեր Բագրատի Կիրակոսյանի/ծնված 11.03.1989թ/Վարսիկ Արզենի Գրիգորյանի/ծնված 15.05.1993թ/Բագրատ Նվերի Կիրակոսյանի/ծնված12.05.2016թ/ Սարահարթ համայնքում 0018-0002 ծածկագրի տակ գտնվող 0.13807հա տնամերձ հողամասի և նրա վրա 1994թ կառուցված 209.51քմ մակերեսով բնակելի տան,56.59քմ մակերեսով անասնագոմի նկատմամբ:

2.Սույն որոշման մեկ օրինակը տրամադրել կադաստրի համապատասխան ստորոբաժանմանը որպես հիմք վերընշված շենք շինությունները պետական գրանցում տալու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից.

Սարահարթ համայնքի ղեկավար Ա. Փիլոյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետությանԼոռումարզիՍարահարթիամայնք, ՀՀ,
Լոռումարզ, գ. Սարահարթ

11. փետրվար.2019թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 9

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշման պահանջներից
Որոշում եմ՝

Լոռու մարզի Սարահարթ համայնքում 06-097 -0018-0002 ծածկագրի տակ գտնվող 0.13807հա տնամերձ հողամասը, բնակելի տունը օժանդակ շինությունը հասցեավորել 1-րդ փողոց, թիվ 37 տուն հասցեով:

Սարահարթ համայնքի ղեկավարի՝ Ա. Փիլոյան

Կատ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Գ.Սարահարթ
13.փետրվարի .2018թ.

# Որոշում 10

## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019թ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 7 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ կետով

Որոշում եմ՝

Անվավեր ճանաչել համայնքի ղեկավարի 2019թ փետրվարի 11-ի թիվ 7 որոշումը ։

Համայնքի ղեկավար՝ Ա. Փիլոյան